# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **25.11.2021թ.**

17.11.2021-25.11.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ Ֆինանսական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման ԵՄ-ԳՀԾՁԲ-21/166 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ն. Հարությունյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի պետ-գլխավոր հաշվապահ, |
| Ա. Մակարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալ, |
| Ժ. Մարգարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի ավագ հաշվապահ, |
| Ն. Դանիելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Ֆինանսական բաժնի հաշվապահ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Հարությունյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը: Հանձնաժողովի անդամ Լ. Ալավերդյանը (Ֆինանսական բաժնի ավագ հաշվապահ) բացակայում էր:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի թվով 4 անդամ, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:

5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:

6. Ընթացակարգի ընտրված մասնակիցներ հայտարարելու մասին:

7. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու և անգործության ժամկետ սահմանելու մասին:

8. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և իրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

9. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի նոյեմբերի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Ֆինանսական աուդիտորական ծառայություններ | 2000000 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով իրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ |
|---|---|---|
| 1 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | ՀՎՀՀ՝ 02618043, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սախարով Բիզնես-Կենտրոն, Նալբանդյան 48/1, 5-րդ հարկ, Հեռ.՝ + 374 60 53 23 23, +374 99 54 33 88, էլ. հասցե՝ general@asatryans.com |
| 2 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 02586575, գործունեության հասցե՝ ՀՀ, 0010 Երևան, Հանրապետության 22, 5-րդ հարկ, Հեռ.՝ +(374 10) 544-301, 544-307, 544-309, էլ. հասցե՝ info@bakertillyarmenia.com |
| 3 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 01569792, գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Դ.Անհաղթ փ. 23/6, 5-րդ հարկ, Հեռ.՝ +374 60 52 88 99, էլ. հասցե՝ bdo@bdoarmenia.am |
| 4 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 02703411, գործունեության հասցե՝ ՀՀ, Բաղրամյան փող. Շենք 3, Հեռ.՝ +374 93 250580, էլ. հասցե՝ info@yerevanaudit.am |
| 5 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 00040569, գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սուրբ Գրիգոր Լուսավորչի փող., 9 շենք, Հեռ.՝ +374 10 500 964, էլ. հասցե՝ gta@am.gt.com |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու

կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերում Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ պահանջված փաստաթղթերը առկա են և կազմված են սահմանված պահանջներին համապատասխան, բացառությամբ հետևյալ մասնակցի.

1. «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ով չեն պահպանվել սույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ դիմում-հայտարարությունը լրացնելիս «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը՝» բառերը պետք է փոխարինվեր «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.2-ի» բառերով, մինչդեռ ներկայացված հավելվածում տվյալ պարբերությունը ամբողջապես բացակայում է:

2. «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով Հավելված 1.2-ով ներկայացված իրական շահառուների մասնակցության չափի տոկոսային հանրագումարը ստացվում է 74.51%, իսկ Լրացուցիչ նշումներ դաշտում նշված 28.8%-ի հետ միասին հանրագումարը 100%-ը գերազանցում է: Լրացուցիչ նշումներ դաշտում նշված տեղեկատվությունը պետք է լրացվեր Հայտարարագրի 3-րդ բաժնում (միջազգային կազմակերպության մասնակցությունը), քանի որ Կազմակերպության կանոնադրական կապիտալում ուղղակի կամ անուղղակի մասնակցություն ունի որևէ միջազգային կազմակերպություն:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

ՀՀ դրամ

| Չափաբաժնի | | Մասնակցի անվանում | Մասնակիցների առաջարկած գները | | |
|---|---|---|---|---|---|
| N | Անվանում | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | Ֆինանսական աուդիտորական ծառայություններ | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | 1,950,000.00 | 390,000.00 | 2,340,000.00 |
| | | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | 2,915,000.00 | 583,000.00 | 3,498,000.00 |
| | | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | 6,500,000.00 | 1,300,000.00 | 7,800,000.00 |
| | | «Երևան-Աուդիտ | 360,000.00 | 72,000.00 | 432,000.00 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Կոնսալտ» ՓԲԸ | | | |
| | | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | 5,000,000.00 | 1,000,000.00 | 6,000,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. նիստը կասեցնել 1 աշխատանքային օրով և առաջարկել անհամապատասխանություններ արձանագրած մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. մասնակիցների կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. Կարգի 67-րդ կետի հիման վրա ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջոցով մասնակցի՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին բավարարելու մասին հայտով ներկայացված հավաստման իսկությունը չստուգել՝ պատճառաբանված որոշման բացակայության պատճառով:

2. Գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

3. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Մասնակցի անվանումը | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | բավարար |
| 1 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | բավարար |
| 1 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | բավարար |

4. Հանձնաժողովի նիստը կասեցնել՝ բավարար գնահատված մասնակիցների հետ գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման նպատակով:

5. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օր, ժամ և վայր սահմանել համապատասխանաբար՝ 25.11.2021թ. ժամը 10:30-ն, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքի 8-րդ հարկում:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. 25.11.2021թ. հրավիրված գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններին բավարար գնահատված և բանակցություններին հրավիրված մասնակիցներից ներկա էր միայն «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հանձնաժողովի նախագահը յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակեց մյուս մասնակիցների համար, և բանակցությունների համար սահմանեց ժամկետ՝ առավելագույնը 15 րոպե տևողությամբ:

2. Բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետին մասնակիցների կողմից նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

1. հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշել և հայտարարել ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցներին.

ՀՀ դրամ

| Չափա բաժնի N | Մասնակցի | | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է “X” | Մասնակցի առաջարկած գինը /առանց ԱԱՀ/ |
|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Անվանում | | |
| 1 | 2 | «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ | | 1,950,000.00 |
| | 3 | «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ | | 2,915,000.00 |
| | 5 | «Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ | | 6,500,000.00 |
| | 1 | «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ | X | 360,000.00 |
| | 4 | «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ | | 5,000,000.00 |

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հանձնաժողովը որոշեց Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցնող մասնակից հայտարարել սույն արձանագրության 5-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցներին:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը Հանձնաժողովին ներկայացրեց պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը: Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 8. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

## 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց պայմանագրերի նախագծերը: Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել պայմանագրերի նախագծերը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 4, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*
Նարինե Հարությունյան ____________ (ստորագրություն)

*Հանձնաժողովի անդամներ՝*
Անի Մակարյան ____________ (ստորագրություն)

Ժաննա Մարգարյան ____________ (ստորագրություն)

Նարինե Դանիելյան ____________ (ստորագրություն)

*Հանձնաժողովի քարտուղար՝*
Մ. Ղազարյան ____________ (ստորագրություն)